

է. «Առէք զլուծ իմ ի ձեզ և ուսարուք յինէն . . . զլուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրօգի»:

Երբ մենք մօլորուում ենք անտառում և ինքներս չենք կարողանում ճանապարհ դուրս գալ, սկսում ենք գոռալ, ձայն տալ, արդեօք արձագանք չի՞ տալ մէկը: Նոյնն է և կեանքի մէջ: Մենք բոլորս դուրս ենք եկած ուղիղ ճանապարհից, յաճախ չգիտենք թէ ո՞ւր ենք գնում: Պէտք է օգնութիւն: Փրկիչն էլ տալիս է այն: Նա հրաւիրում է իւր մօտ մօլորուածներին և յոգնածներին ասելով՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ»:

Գնանք նրա յետեից և նրանից սովորենք թէ ինչ է կեանքը:

Թարգմ. Գրիգոր Բան. Նոր-Արեւեանց.



### ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔՈՎ

Բ.

Երկուշաբթի առաւօտեան «Օրուայ նորութիւններ» թերթի խմբագիր-հրատարակիչ Նորման նստած էր խմբագրատան գրասենեակում: Նրա առաջ դիզուած էին յօդուածների սրբագրութիւններ: Ինքն ևս պատրաստուում էր առաջնորդող յօդուած գրելու: Թերթը դուրս էր գալիս երեկոները, ուստի մինչև ճաշ յօդուածը պէտք է պատրաստ լինէր: Նորման առհասարակ գրում էր արագ, առանց դժուարութեան և սովորաբար մի յօդուած գրելը տևում էր 2—3 ժամ: Այժմ նստել էր և չգիտէր ինչ գրէր և ինչպէս երեկուայ խոստումը միանգամայն փոխել էր նրա բոլոր հայեացքները թերթի նշանակութեան մասին:

— Ես խոստացայ ամեն բանում գնալ Քրիստոսի հետքով, մտածում էր Նորման, գործս այնպէս առաջ տանել, ինչպէս կը տանէր Փրկիչ: Արդեօք Քրիստոս կը հաւանէր մեր գրական աշխատանքի բնաւորութիւնը, թէ խստութեամբ կը դատապարտէր:

Անշուշտ պէտք էր փոխել թերթի բնաւորութիւնը, ծաղկած ու հաստատուած գործը նոր սկզբունքների վրայ դնել: Բայց ինչպէս պէտք է անել, որ յանկարծ սխալ բան դուրս չգար և ամեն ինչ փչացնէր: Նորման տատանւում էր, նրա ներսը յուզուող զգացումները երկիւղ էին ազդում նրան: Նորման վեր կացաւ, դուռը պինդ փակեց, ծունկ չոքեց և սկսեց աղօթել. մի բան, որ շատ տարիներէ ի վեր չէր արել: Նա խնդրում էր Աստուծուց, որ ուղղէ իւր տանջուող միտքը դէպի բարին:

Դուռը խփեցին.

— Կարելի է մտնել.

Նորման վեր կացաւ, մօտեցաւ սեղանին, նստեց գործի և ասաց.

— Մտէք.

Ներս մտաւ Կլարկ, Նորմանի օգնականը, և տալով նրան սրբագրութեան մի նոր թերթ, ասաց.

— Հէնց նոր հեռագրով ստացուեց: Հրապուրիչ յօդուած է: Կեցցէ մեր Տոմ Սաուէր: Ես ուղարկեցի նրան հարևան Ռիդորդու քաղաքը. երէկ այնտեղ մեծ բըռնցքակառի կար: Կուռում էին Ամերիկայի լաւագոյն ըմբիշները: Ահա կուռի նկարագրութիւնը. այստեղ կը լինի երեքուկէս սիւնեակ: Մեր նկարագրութիւնը երևի ամենից լաւը կը լինի:

Նորմանը վերցրեց յօդուածը, ուշադրութեամբ կարդաց, ապա թերթը սեղանի վրայ դրեց և փոքր ինչ մտածելուց յետոյ, վճռողական կերպով ասաց.

— Այդ յօդուածը չպէտք է տպուի:

— Ինչպէս . . . ինչ ասացիք, վրայ բերեց Կլարկ բռնաբարութիւն շփոթուած:

— Թողէք այդ նկարագրութիւնը, մենք այդ չենք տպուի:

Կլարկ անհասարակ չէր վիճում հրատարակչի հետ։ Թմբադրատանը Նորմանի խօսքը օրէնք էր և նա սովորաբար յետ չէր վերցնում իւր խօսքը, սակայն ներկայ հանգամանքն այնքան տարօրինակ էր, որ Կլարկ շկարողացաւ իրեն պահել։

— Դուք ենթադրում էք, որ թերթի համարը կարելի է դուրս բերել առանց բռնցքակռուի նկարագրութեան։

— Այո, հէնց այդ եմ ուզում ասել։

— Բայց այդ անկարելի է։ Չէ որ միւս բոլոր թերթերը կը տպեն այդ մասին։ Ի՞նչ կասեն մեր բաժանորդները, եւ վերջապէս ի՞նչու չտպել, սկսեց տաքանալ Կլարկը։

Էդուարդ Նորման մտախոհ նայեց Կլարկին։ Օգնականը ուրիշ դաւանութեան էր պատկանում, և նոքա երբէք չէին խօսում կրօնական խնդիրների մասին, թէպէտ երկար տարիներէ ի վեր աշխատում էին միասին։

Այս անգամ Նորման փոքր ինչ տատանուելուց յետոյ, կտրուկ կերպով հարցրեց.

— Կլարկ, եթէ Քրիստոս լրագիր հրատարակէր, ի՞նչ էր կարծում, թերթի այս երեքուկէս սիւնեակը կը նուիրէր բռնցքակռուի նկարագրութեանը։ Միթէ կեանքի մէջ ուրիշ աւելի հետաքրքրական խնդիրներ չկան։

Կլարկ զարմացքից սառաց մնաց և ապա պատասխանեց.

— Ես կարծում եմ, որ Քրիստոս այդ չէր տպիլ . . . բայց ի՞նչի համար է այդ հարցը։

— Նրա համար, որ հէնց այդ իսկ պատճառով ես չեմ ուզում ձեր բերած նկարագրութիւնը մեր թերթում տպել տալ, ասաց Նորման։ Ես վճռել եմ մի ամբողջ տարուայ ընթացքում ոչ մի այնպիսի բան չգրել իմ թերթում, որը Քրիստոս թոյլ չէր տալ և չէր արդարացնիլ։

Տարօրինակ միտք, ակամայ արտասանեց Կլարկ։

— Ըստ իս, աւելի տարօրինակն այն է, ասաց Նորման, որ մեզ՝ քրիստոնեաներիս համար տարօրինակ է թւում քրիստոնէաբար լրագիր հրատարակելը։

Կլարկ մնացել էր զարմացած: Նա ոչինչ չէր կարողանում հասկանալ: Նրան թուում էր, թէ Նորման բնական գրութեան մէջ չէ, իսկ միւս կողմից էլ, շնայած նրա յայտնած մտքի նորութեան, պարզ էր, որ այդ նոր միտքը ամենևին տարօրինակ չէր:

— Դուք չէք մտածում, թէ այդ ինչպէս կազդի թերթի վրայ, հարցրեց վերջապէս Կլարկ՝ բոլորովին այլայլուած:

— Ի՞նչէք ուզում ասել դրանով, հարցրեց Նորման՝ նրա վրայ նայելով:

— Ես կարծում եմ, որ այդ փոփոխութիւնը կորստի կը մատնի մեր թերթը, վրայ բերեց Կլարկ: Բանն այն է, որ անհնար է թերթը առաջ տանել այդ հիմունքներով: Այդ աւելի քան բարձր է: Աշխարհը նախապարաստուած չէ դրա համար՝ ինձ համար միանգամայն պարզ է, որ եթէ մենք չտպենք այդ նկարագրութիւնը, հարիւրաւոր բաժանորդներ կը կորցնենք, առանց մարդարէ լինելու կարելի է դուշակել այդ: Քաղաքի լաւագոյն հասարակութիւնը ծարաւի է բռնցքակուռի նկարագրութեան: Նրանք գիտեն, որ հարեան քաղաքում տեղի է ունեցել բռնցքակուռ և յոյս ունեն երեկոյեան թերթում կարդալու նրա մանրամասն նկարագրութիւնը: Այդպիսի կուռների հետեւանքները հասարակութեանը հետաքրքրում են ոչ պակաս, քան քաղաքային նոր վարչութեան կամ նոյն իսկ նախագահի ընտրութիւնը: Դուք կամենում էք անտես անել հասարակութեան ցանկութիւնը: Ըստ իս, դա մի խոշոր սխալ կը լինի ձեր կողմից:

Էդուարդ Նորման մի րոպէ լուռ մնաց և ապա հանդարտ, բայց հաստատ կերպով, ասաց.

— Ես կարծում եմ, որ իմ թերթում այդպիսի մի նկարագրութեան լոյս տեսնելը կը լինէր շատ աւելի մեծ և աններելի մի սխալ: Դուք ասում էք, հասարակութիւնը հաշիւ է պահանջում այն մասին, թէ ինչպէս ութ հոշակաւոր ըմբիշներ՝ մարդու կերպարանքով ութ մտի գնդեր, կուռել են և բռունցքներով ծեծել իրար և թէ ինչպէս հինգ հազար հոգի, շատերը հեռու տեղից եկած, հան-

գիտատես են եղել այդ կուռին: Օրինաւոր է արդեօք այդ պահանջը. պարտադիր է արդեօք մեզ համար: Ի՞նչ բան է թերթը: Մտածել էք արդեօք դուք, Կլարկ, լուրջ կերպով նրա նշանակութեան մասին: Չէ որ թերթը կարծիքների ղեկավարն է: Նա պէտք է թերադրէ հասարակութեանը խելացի պահանջներ, խղճի, սրտի, մտքի պահանջներ և ոչ թէ ինքը հնազանդուի ամբսխի ամեն մի պահանջին:

Ի՞նչ էք կարծում, Կլարկ, որտեղ կարելի է գտնել կեանքի ընթացքի ճշմարիտ ուղեցոյց: Արդեօք այդ չի սովորողուած Քրիստոսի վարդապետութեան ու նրա կեանքի օրինակի մէջ: Միթէ դուք համաձայն չէք, որ մարդիկ իրենց ամենօրեայ կեանքի ընթացքում պարտաւոր են հետևելու Քրիստոսի օրինակին, որ այդ օրինակը պարտաւորեցուցիչ է նաև թերթի համար և որ, եթէ ամբսխի ու ընթերցողների ճաշակի պահանջները չեն համապատասխանում Աւետարանի պահանջներին, մենք չպէտք է նրանց նախապատուութիւն տանք:

Կլարկը կարմրեց և նախ քան նորմանի հարցին պատասխանելը՝ շուռ եկաւ ակոռի վրայ:

— Ես կարծում եմ, որ կեանքի ընթացքի համար դրանից աւելի լաւ առաջնորդող չի կարող լինել, բայց հարց է, թէ արդեօք իրագործելի է այդ: Հասարակութիւնը այդպիսի պահանջ ունի, վճարում են արդեօք այժմ՝ դրա համար: Որպէս զի թերթը յաջողութիւն ունենայ, մենք պէտք է յարմարուենք հասարակութեան պայմաններին և պահանջներին: Մենք չենք կարող դործել այնպէս, որպէս թէ իդէալական աշխարհում ապրելիս լինենք:

— Դուք կարծում էք, որ մենք քրիստոնեայ հասարակութեան մէջ չենք կարող յաջողութեամբ տանել թերթը ճիշտ քրիստոնէական հիմունքներով:

Այո, հէնց այդպէս էլ կարծում եմ: Այդ անհնար է: Մի ամսում ամեն ինչ կը կորցնենք:

Էդուարդ Նորման իսկոյն և եթ չպատասխանեց, նա խորասուզուել էր մտքերի մէջ:

— Յարմար առթիւ մենք կը խօսենք դարձեալ այդ մասին, կըսրկէ Ա.ս այժմ ես կարծում եմ, որ մենք լաւ հասկացանք իրար: Ես ինձ խօսք եմ տուել մի ամբողջ տարուայ ընթացքում թերթը տանել այնպէս, որ իւրաքանչիւր յօդուածի վրայ կարելի լինի դնել Քրիստոսի անունը, առանց նրան արատաւորելու: Մնացած բոլոր յօդուածները ես անխնայ պէտք է դուրս ձգեմ «Սրուայ նորութիւններէ» էջերից: Վերցրէք հէնց միայն թատրոնական բաժինը, ես նրա երեք քառորդ մասը կրճատել եմ, սարսափելի բան է: Մենք ամեն օր լցնում ենք սիւնեակների շարքերը թատրոնով, որպէս թէ թատրոնը, համերգները, գրականական երեկոները առաջնակարգ նշանակութիւն ունենային կեանքի մէջ: Այդ բոլոր ներկայացումներն ու հանդէսները զուարճութեան համար են: Ձի կարելի զուարճութիւնն ու խինդը կեանքի էական խնդիր դարձնել: Վերջապէս, չէ որ լրագիր կարդում են ոչ միայն տեղական ընթերցողները, այլ նա տարածում է հարիւրաւոր վերստեր հեռու ուրիշ քաղաքներ, գիւղեր ու խուլ անկիւններ: Այնտեղի ընթերցողներն ինչ դործ ունին մեր տեղական թատրոնի նորութիւնների հետ: Նրանք ունին իրենց կեանքի դրաման, կեանքը իւր խոր ու դարաւոր հարցերով, մշտական ներքին մաքառումով: Օգնեցէք նրանց իրենց սեփական դերը աւելի լաւ կատարելու կեանքի թատերախաղի մէջ: Ձեր խորհուրդները, ցուցմունքները, անկեղծօրէն ու սրտանց ասած խօսքը այդ տեսակէտից նրանց համար աւելի թանկ և ցանկալի կը լինի, քան թէ թատրոնական նորութիւնների և համերգների ամենանուրբ վերլուծութիւնը: Ճիշդն ասած, քանի աւելի լուրջ եմ մտածում թերթի կոչման մասին, այնքան աւելի եմ սկսում ցաւել ինչպէս ինձ, այնպէս և աշխատակիցներիս համար: Փոխանակ ընթերցողին զարթեցնելու, սկզբունքի խնդիրներ դնելու և լուսաբանելու, հասարակութեան ուսուցիչ և նրա կարծիքների, ճաշակի ու ձգտումների ղեկավար լինելու, մենք՝ լրագիր հրատարակողներս կամովին մեզ վրայ ենք վերցնում ժողովրդի

խեղկատակի նուաստացուցիչ գերը, աշխատում ենք զը-  
ուարճացնել ամբոխին, գուշակել նրա ճաշակները և ամեն  
կերպ նրանց գոհացում տալ: Ինչ ուզում է լինի, ես կը-  
գարձնեմ «Օրուայ նորութիւնների» ղեկը և նոր ընթացք  
կը տամ նրան: Կարծեմ կեանքի մէջ, բացի այլ և այլ  
մրցութիւններից ու զուարճութիւններից, բաւականաչափ  
արժէք ունեցող նիւթեր կան. մենք կօգտուենք մի միայն  
նրանցից:

Կլարկը տատանում էր.

— Դուք մի կերպ կը բացատրէք բռնցքակառուի նկա-  
րագրութեան շտապուիլը:

— Ո՛չ: Թող տպեն թերթի համարը, որպէս թէ  
բռնցքակառու երբէք տեղի չէ ունեցել, իսկ ես այս օրերս  
մի յօդուածով կը յայտարարեմ թերթի բնաւորութեան  
փոխուելու մասին:

Կլարկ գուրս եկաւ գրասենեակից: Նա զարմացած  
էր և բաւականին շփոթուած:

Կէսօրին խմբագրատանն ու տպարանում արդէն  
ամենքը գիտէին և խօսում էին արտասովոր եղելութեան  
մասին. թերթը պէտք է գուրս գար առանց մի խօսք  
անգամ ասելու նախընթաց օրը տեղի ունեցած նշանա-  
ւոր բռնցքակառուի մասին:

«Օրուայ նորութիւնների» երեկոյեան լոյս տեսած  
համարը բռնցքակառուի նկարագրութեան բացակայութեամբ  
աւելի մեծ տպաւորութիւն արեց, քան այդ կարող էր  
անել նոյն նկարագրութեան տպագրութիւնը: Պատահա-  
կան գնողներից և մշտական բաժանորդներից հարիւրաւոր  
մարդիկ ազահաբար աչքի էին անցնում թերթը՝ նկա-  
րագրութիւնը փնտռելով: Զգտնելով որոնածը, նրանք  
շտապում էին ուրիշ թերթ գնելու: Լրագրավաճառները  
ոչինչ չգիտէին այդ պակասի մասին:

Փողոցի անկիւնում մի պարոն գնեց «Նորութիւններ»  
թերթի համարը, շտապով աչքի անցրեց բոլոր էջերն ու  
վրդովուած դիմեց լրագրավաճառին:

— Տղայ, ի՛նչ է պատահել ձեր լրագրին. այստեղ

բռնցքակռուի մասին ոչինչ չկայ: Ուրիշ լրագիր տուէք, որի մէջ գրուած լինի, պահանջեց գնողը:

Ստանալով ուրիշ լրագիր՝ նա հեռացաւ, իսկ լրագրավաճառ տղաները ուշադրութեամբ զննում էին թերթերն և չէին հասկանում, թէ ինչու բռնցքակռուի նկարագրութիւնը չի տպուած:

Նրանք նեղացած դիմեցին «Նորութիւններին» գրասենեակը, այնտեղ արդէն հաւաքուել էին մի քանի լրագրավաճառներ: Բոլորն էլ գրգռուած էին, աղմկում էին: Այդ ձայնին Նորմանը ներս մտաւ գրասենեակ:

— Ի՞նչ է պատահել, հարցրեց նա:

— Թերթը չի ծախուում, աղաղակեցին տղաները, բռնցքակռուի մասին ոչինչ չկայ գրուած:

— Համարները յետ դարձրէք, ես կը հրամայեմ փողը ձեզ վերադարձնել:

Նորման գրասենեակից դուրս եկաւ և գնաց տուն: Ճանապարհին նա մտածում էր այն ընդհարման մասին, որ նա պիտի ունենար ընթերցողների հետ իւր լրագրի պատճառով: Ընթերցողները սովոր են որոշ տեսակի լրագրական յօդուածների, իսկ սովորութիւններից մարդիկ հեշտութեամբ ձեռք չեն քաշում: Ծխախոտը, օղին, անկասկած, ֆլասակար են, սակայն մարդիկ չեն ուզում նրանցից ձեռք վերցնել: Զարմանալի չէ, որ նրանք դժգոհ մնան նաև լրագրի փոփոխութիւնից:

— Անշուշտ շատ բաժանորդներ կը կորցնեմ, ասում էր ինքն իրեն Նորման, ինչ արած: Կամ պէտք է հրաժարուել Քրիստոսին հետևելու խոստումից կամ հասարակութեան կոպիտ ու փչացած ճաշակին ծառայելուց: Տեսնենք հնարաւոր է արդե՞ր քրիստոնեաների հետ լրագրի միջոցով խօսել Քրիստոսի հօգով:

Հետևեալ օրերը խմբագրատանը շարունակ նամակներ էին ստացուում բռնցքակռուի նկարագրութեան բացակայութեան առթիւ:

Յանդիմանում էին խմբագրին, որ նա իւր դիրքի բարձրութեան վրայ չէ կանգնած, աչքից թողել է նշա-

նաւոր դէպքը: Ոմանք սպառնում էին բաժանորդութիւնից հրաժարուել. ուրիշները երկիւղ էին յայտնում, թէ մի գուցէ թերթը այդպիսով կորցնի իւր ընթերցողներին:

— Հասարակութիւնն իւր ճաշակն ու պահանջներն ունի: Տուէք նրան այն, ինչ որ սիրում է և ձեր յաջողութիւնը ապահովուած կը լինի, գրում էին մի քանիսը:

Նամակներից մէկը յատկապէս գրաւեց Նորմանի ուշադրութիւնը: Այդ ծխախոտի մի մեծ գործարանատիրոջից էր: Նա տպել էր տալիս «Օրուայ նորութիւնների» մէջ ընդարձակ յայտարարութիւններ: Պատուիրած յայտարարութեանց ժամանակամիջոցը լրանում էր. գործարանատէրը այլ ևս չէր ցանկանում նորոգել:

— Ձեր թերթի բաժանորդները, անկասկած, կը պակասեն, գրում էր նա, ինձ համար այլ ևս ձեռնտու չէ այդ թերթում յայտարարութիւններ տպել տալ:

Յայտարարութիւններից մեծ արդիւնք էր ստացւում, Նորման այդ կողմից որ և է ֆլաս չէր սպասում: Այդ մի տհաճ անակնկալ էր, սակայն Նորման չվրդովուեց: Առաջ նա չէր նայում երբէք թերթի վերջին երեսները: Այժմ ուշադրութիւն դարձնելով այդ կողմի վրայ՝ նա եկաւ այն եզրակացութեան, որ յայտարարութիւններից շատերը Գրիստոս թոյլ չէր տալ:

— Ի՞նչպէս կը վերաբերուէր Գրիստոս, օրինակ, հէնց այս երկար յայտարարութեանը սգելից խմիչքների մասին:

Ապա գալիս էին յայտարարութիւններ ճաշարանների, լիկեօրների, գարեջրատների, հրապուրիչ և կեղտոտ վերնադրով գրքերի մասին: Այդ ամենը նկարներով և մեծ տպուած աչքի էին զարնում: Ի՞նչպէս պէտք էր անել:

Այդ բոլոր յայտարարութիւնները լրագրի ամենաարդիւնաւոր մասն էին կազմում: Ի՞նչ կը լինի թերթը, եթէ այդ բոլորը դուրս ձգուեն: Կարո՞ղ է արդեօք «Նորութիւնները» շարունակել իւր գոյութիւնը առանց դրանց:

Սակայն էլ սրտեղ մնաց ի՞նչպէս կը վարուէր Գրիստոս իմ տեղը՝ հարցը, մտածում էր Նորման. թոյլ կը տանք արդեօք Գրիստոս յայտարարութիւն տպել թերթում:

գինու, ծխախոտի կամ ահա այս գայթակղեցուցիչ վերնագրով գրքի մասին: Նորման ազնուաբար հարց տուեց իրեն և զօրութիւն ու իմաստութիւն խնդրելով Աստուծուց, հրաւիրեց Կլարկին իւր գրասենեակը:

— Կլարկ, հանդարտութեամբ սկսեց Նորման, ես աչքի անցրի մեր յայտարարութեանց սիւնեակները և վճռեցի այդ յայտարարութիւններից մի քանիսը դուրս ձգել, հէնց որ կը լրանայ նրանց ժամանակամիջոցը: Խնդրում եմ կանխօրէն յայտնէք, որ այդ յայտարարութիւնները այլ ևս չեն կարող տպուել: Ես այստեղ նշանակել եմ, թէ որ յայտարարութիւններն այլ ևս չեն կարող տպուել:

Նա տուեց Կլարկին նշան արած թերթը. վերջինս խիստ լուրջ կերպով աչքի անցրեց այն:

— Այդ բանը «Նորութիւններին» մեծ վնաս կը հասցնէ: Այս դրութեամբ թերթը չի կարող շարունակուել:

— Ինչո՞ւ, հարցրեց հանդարտութեամբ Նորման:

— Ինչո՞ւ . . . Որովհետեւ մուտքը չի կարող ծածկել թերթի ծախքը: Կլարկն այլ ևս չէր կարողանում զսպել իւր վրդովմունքը: Դործն այդպէս տանելով՝ մենք կը կորցնենք թերթը:

— Դուք այդպէս էք կարծում, հարցրեց Նորման առանց պատասխանի սպասելու, և մի փոքր մտածելուց յետոյ շարունակեց.

— Կարգադրեցէք, ինչպէս որ խնդրեցի ձեզ, ես հաւատում եմ, որ Քրիստոս այդպէս կը վարուէր, իսկ ես ձեզ ասել եմ արդէն, Կլարկ, թէ ինչպիսի խոստում եմ արել իմ գործողութեան եղանակի մասին մի ամբողջ տարուայ ընթացքում, առանց ուշադրութեան առնելու դրանից առաջացած հետեւանքները . . .

Ի դէպ, ասացէք պարօն Հարկորդին, որ նրա յօդուածը գրականական թողովարանում կարդացուած երեկուայ անյաջող դասախօսութեան մասին չի տպուիլ և երբ նա գայ, խնդրեցէք, որ ինձ մօտ մանի:

— Ի՞նչպէս թէ չի տպուիլ, զարմացաւ Կլարկ: Դուք չէք կամենում տպել մեր լաւագոյն ֆէլիէտոնիստի յօդ-

ուսմ՞ը. կարգացել էք արդեօք այդ յօդուածը: Չէ որ այդ սրամտութեան մի հրախաղ է: Հարկորդի գրելչք թունալեց է և թրի պէս սուր:

— Հէնց այդ իսկ պատճառով ես չեմ ուզում տպել նրա յօդուածը երեկուայ անյաջող դասախօսութեան մասին և կամենում եմ խնդրել, որ նա առհասարակ փոխի իւր գրելու ձևը, եթէ ուզում է առաջուայ պէս աշխատակցել «Թրուայ նորութիւններին»: Ես տեսնում եմ, որ մենք՝ լրագրում գրողներս սկսել ենք խիստ տնգուսպ լեզու բանեցնել: Արտաքին յաջողութիւն, ամբոխի գռեհիկ ծիծաղ ձեռք բերելու տենչով բռնուած՝ մենք մոռանում ենք գործը, չենք խնայում մարդու համար ամենաթանգ բանը՝ նրա անձնաւորութիւնը, մոռանում ենք հանրակեցութեան տարրական պահանջները՝ քաղաքավարի վարուելու ամեն մէկի հետ՝ թէկուզ նա սկզբունքով մեր հակաակորդը լինի: Վերցրէք ձեր գոված յօդուածը. իւր տեսակում նա օրինակելի է: Դուք ասում էք, որ այդ սրամտութեամբ համեմուած ու նուրբ թոյնով լի է: Ես ևս առաջ այդպիսի կարծիքի էի Հարկորդի գրելու եղանակի մասին: Այժմ՝ կարծիքս փոխել եմ: Ըստ իս ամբողջ յօդուածը սկզբից մինչև վերջ մի ծաղր է անյաջող դասախօսի վրայ, որ աւելի վիրաւորական է չգիտեմ որի՝ դասախօսի, թէ հեղինակի կամ յօդուածը զետեղող թերթի համար: Եթէ ես լինէի ընթերցող՝ Հարկորդի յօդուածը կարդալուց յետոյ՝ կասէի, «աւելի լաւ է հանգիստ թողնէք ուրիշների յիմարութիւնները և ասէք ձեր խնջօք խօսքը, եթէ կարող էք»: Եւ ես կարծում եմ, որ իրաւացի կը լինէր իմ ասածը:

— Ես չեմ կամենում ասել, — շարունակեց Նորման, — որ բանակուիւ, ընդդիմախօսութիւն չպէտք է լինի: Ոչ, այդ պէտք է լինի, անհրաժեշտ է, դա օգնում է ճշմարտութեան բազմակողմանի լուսաբանութեանը, սակայն ամեն մի բանակուիւ «էտք է լինի զուտ գրական հողի վրայ»: Իսկ մեր մէջ սովորական բանակուիւը այդ սահմանից դուրս է գալիս և անձնական վիրաւորանքի բնաւո-

բութիւն ստանում: Վիճելի հարցը երկրորդական տեղ է բռնում, իսկ վիրաւորուած անձնական ինքնասիրութիւնը՝ առաջնակարգ:

—Պարօններ, ինչ գործ ունիմ ես ձեր անձնական հաշիւների, մանր եսասիրութեան հետ,—պատրաստեմ ես ասելու դարձեալ որպէս ընթերցող:—Ես բերել եմ տալիս ամսագիր կամ օրաթերթ, ցանկանալով գտնել այս կամ այն հարցի պարզաբանութիւնը, և յանկարծ ընկնում եմ հայհոյութեան, կոպիտ ծաղրի, անվայել վիրաւորանքների դաշտի մէջ: Տեսէք ձեր մասնաւոր հաշիւները, եթէ այդ ձեզ հարկաւոր է, անձամբ տեսակցելով իրար հետ կամ դրադրութեամբ: Իսկ լրագրի միջոցով օգնեցէք ինձ կեանքի այս կամ այն երևոյթն ըմբռնելու, բացատրեցէք որչափ հնար ունիք մութ, խճճուած խնդիրներ և, որ դալխաւորն է, անձնաւորութիւնը յարգել սովորեցրէք: Անձնաւորութիւնը միշտ և ամեն տեղ պէտք է անձեռնմխելի լինի: Պէտք է կռուել ստութեան, մոլորութեան, յիմարութեան դէմ, բայց չվիրաւորել մարդու անձնաւորութիւնը: Մարդը մարդու համար՝ սրբութիւն է, պէտք է նրան յարգել: Այդ մասին ես կը խօսեմ բոլոր աշխատակիցների հետ, իսկ առ այժմ՝ բացատրեցէք Հարկորդին, թէ ինչու նրա յօդուածը չի տպոււմ այսօրուայ համարի մէջ:

Կլարկ ուսերը վեր քաշեց և դուրս եկաւ, զգալով, որ ինչ որ մի անհասկանալի բան է կատարուում: Նա ոչ մի կերպ չէր կարողանում ըմբռնել եղելութիւնը: Նա այլայլուած էր և կատաղած: Նորա համար ակներև էր, որ թերթը կը կորչի, հէնց որ հրատարակչի այդպիսի վճռական կանոնով առաջնորդուելու լուրը տարածուի:

—Ի՞նչ դրութեան մէջ կընկնի գործը, եթէ բոլորը ընդունէին այդ կանոնը: Նա կօչնչացնէր գոյութիւն ունեցող կարգերը և անվերջ խառնաշփոթութիւնների պատճառ կը դառնար: Այդ կատարեալ անմտութիւն է,—խորը մտածում էր ինքն իրեն Կլարկ:

Նորման, սակայն, շարունակում էր ամեն կողմից լաւ

քննելու իւր առաջ դրած խնդիրը, երկար խորհրդածելուց յետոյ, նա վճռեց հաւատարիմ մնալ իւր տուած խստամանը մինչև վերջ, նա հրաւիրեց Կլարկին և միւս աշխատակիցներին խմբադրատուն և ասաց նրանց.

— Ես հրաւիրեցի ձեզ այստեղ, որպէս զի հաղորդեմ ձեզ իմ նոր ծրագիրների մասին «Նորութիւններ»-ի հրատարակութեան վերաբերեալ: Ես մտադիր եմ մի քանի փոփոխութիւններ անել, որ անհրաժեշտ եմ համարում: Ես հասկանում եմ, որ դրանցից մի քանիսը մարդկանց շատ տարօրինակ կը թուին, սակայն ես հիմք ունեմ այդպէս վարուելու: Ես վճռել եմ փոփոխելու լրագրի թէքնաւորութիւնը և թէ մասամբ հրատարակութեան եղանակը: Կիրակի օրերը թերթը չպէտք է հրատարակուի: Շաբաթ օրերը լրագրի համարը լոյս կը տեսնի կրկնակի ծաւալով: Կէսը նուիրուած կը լինի ընթացիկ լուրերի և առօրեայ խնդիրների, իսկ միւս մասը ամբողջովին կը նուիրուի լուրջ բարոյական բովանդակութեամբ յօդուածներու: Ինձ թւում է, թէ այդպիսի յօդուածներ զէթ շաբաթը մի անգամ էական կարևորութիւն ունին ընթերցողների համար և մենք լրագրողներս ի զուր ենք այդ մասը աչքից թողել, սխալ կերպով մտածելով, որ բաժանորդներին հարկաւոր է միմիայն թեթեակչիւ շատախօսութիւն քաղաքականութեան, թատրոնի և օրուայ շարիքի մասին: Ես, գոնէ, այլ կերպ եմ մտածում, հաւատում եմ, որ կարելի է տանել գործը այնպէս, ինչպէս որոշել եմ և վճռել այդ փորձն անել:

— Դուք, պարոններ, — կրկնում եմ, — չէք վրասուիլ: Եթէ իմ գործը քանդուելու լինի, ես ձեզ նախապէս կը զգուշացնեմ: Ամբողջ պատասխանատուութիւնը ես ինձ վրայ եմ առնում, իսկ ձեզ խնդրում եմ միայն սիրով օգնել ինձ: Օգնեցէք ինձ քրիստոնեայ հասարակութեան մէջ լրագիրը քրիստոնէական ոկզբունքների վրայ հաստատելու:

Խմբադրութեան անդամներն ու աշխատակիցները ուշադրութեամբ լսեցին Նորմանին և մտքերի մէջ խորա-

առաջուած ցրուեցին, խմբագրի արտասովոր մտադրու-  
թեան մասին կարծիքներ փոխանակելով:

Նորման մնաց մենակ և խոր մտածումները մէջ  
ընկաւ:

Բաւականաչափ այժ կունենանմարդեօք իմ առաջ  
գրած գործը ի կատար ածելու: Այդպիսի մի լրագիր  
պէտք է, վերջապէս, երևան դայ, բայց դրա համար հա-  
մապատասխան մեծ ոյժ է պահանջում, հարկաւոր է  
ըրիտօնէական վարդապետութեան աւետարանական աշ-  
խարհայեացքի, խոր ըմբռնումն, մեծ տաղանդ, կեանքի  
հիմնական և յաւիտենական խնդիրների մասին ոչ թէ  
օրինականի մեռած լեզուով, այլ կենդանի սրտի կենդանի  
խօսքով խօսելու ընդունակութիւն: Իսկ ինչ դուրս կը գայ,  
եթէ այդ չյաջողուի ինձ: Մարդիկ չեն հասկանալ: Անյա-  
ջողութեան պատճառը ի՞նչ մէջ կը լինի, իսկ նրանք կրսիսեն  
պնդել, որ իմ մտադրութիւնը մի անմիտ ցնորք էր, որ  
այն կերպով, ինչպէս ես եմ մտածել, լրագիր հրատա-  
կել չի կարելի:

— Ո՛չ, կարելի է, հնարաւոր է, — հաստատապէս վճռեց  
Նորման, — կարելի է և պէտք է: Միմիայն թէ ուժերս  
ներէին, Տէր օգնիր:

(Շարունակելի).

